

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱԸ

ԳԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԵԶ-ԲՄԱՇՁԲ-22/2»

ք. Երևան

«29» «դեկտեմբերի» 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ԿԱՊԻՏԱԸ ՇԻՆ ԶՈՆԱՏՐԱԿՇՆ ՍՊ Ա ԲԻՂԵՔ ՍՊ ընկերությունները /Կոնսորցիումը/, երկուսը միասին (այսուհետև՝ Կապալառու) ի դեմս ԿԱՊԻՏԱԸ ՇԻՆ ԶՈՆԱՏՐԱԿՇՆ ՍՊԸ-ի տնօրեն Յ.Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, ինչպես նաև կոնսորցիումի 01.12.2021 թվականին կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱԸ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերութունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերութունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերութուններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ կյուլթերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերութուններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերութունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### 4. ԱՃԻՆԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ Նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է Էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

#### **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24780000 (քսանչորս միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ԱԱՀ-ն՝ 4130000 (չորս միլիոն հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունած Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների դիմաց վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

**Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև վճարումները իրականացնելու նպատակով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:**

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի **0,05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի **0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում է հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

#### **7. ԱՆՀԱՂԹԱԿԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի

ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով,

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար

անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում էրևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան  
ք. Երևան, Արգիշտիի փ. 1  
ՀՎՀՀ 02593108



Է. Կիրակոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

### ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆ ԶՈՆԱՏՐԱԿՇՆ ՍՊԸ  
ք. Երևան, Սասունցի Դավթի փող. 79  
«ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ  
Հ/Հ 1150015606106132  
ՀՎՀՀ 00494982



Հ. Կարապետյան

(ստորագրություն)

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՅԱՇԻԿ**

**«Երևան քաղաքի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքներ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱԼ**

h/h	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակ	Միավորի ընդ.արժ հազ.դրամ	Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ	Ընդհանուր արժեքը /տոկոս/ %
1	2	3	4	5	6	7
	<b>Քանդման աշխատանքներ</b>					
	Առաջին հարկ					
	Լսարաններ					
	Բացվածքներ					
1	Փայտե պատուհանների քանդում	մ <sup>2</sup>	24.03	1776.00	42677.28	
	<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>				42677.28	0.21%
	Պատեր					
1	Պատերից և առաստաղներից հին ներկի մաքրում /կացնահատում/	մ <sup>2</sup>	383.0	310.00	118730.00	
2	Գաջի սվաղի վնասված հատվածների քանդում պատերից	մ <sup>2</sup>	140.0	621.00	86940.00	
3	Նույնը առաստաղից	մ <sup>2</sup>	55.0	710.00	39050.00	
4	Շին. աղբի բարձում մեխանիզմով ա/մեք.	մ <sup>3</sup>	5.85	710.00	4153.50	
5	Շին. աղբի տեղափոխում 12կմ հեռ. վրա	տ	8.78	2664.00	23376.60	
	<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>				272250.10	1.32%
	Սանհանգույցներ					
	Բացվածքներ					
1	Փայտե պատուհանների քանդում	մ <sup>2</sup>	6.01	1687.00	10134.65	
2	Փայտե դռների քանդում	մ <sup>2</sup>	9.65	1154.00	11133.79	
	<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>				21268.44	0.10%
	Հատակներ					
1	Կերամիկական սալիկներով հատակների քանդում սանհանգույցներում	մ <sup>2</sup>	24.50	355.00	8697.50	
2	Բետոնե հարթակների քանդում սանհանգույցներում	մ <sup>3</sup>	1.0	10656.00	10656.00	
3	Սանհանգույցների Ց/ավազե հարթաշերտի քանդում 30մմ հաստ.	մ <sup>2</sup>	24.50	355.00	8697.50	
	<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>				28051.00	0.14%
	Պատեր					
1	Միջնորումների քանդում սանհանգույցներում 100մմ հաստ.	մ <sup>3</sup>	2.80	7992.00	22377.60	
2	Պատերից հին ներկի մաքրում	մ <sup>2</sup>	59.4	310.00	18414.00	
3	Սանհանգույցի պատերից հախճասալերի քանդում	մ <sup>2</sup>	100.0	532.00	53200.00	
4	Պատերից ց/ավազե սվաղի քանդում	մ <sup>2</sup>	100.0	355.00	35500.00	
5	Գաջի սվաղի վնասված հատվածների քանդում պատերից	մ <sup>2</sup>	59.4	621.00	36887.40	
6	Նույնը առաստաղից	մ <sup>2</sup>	24.5	710.00	17395.00	
7	Շին. աղբի բարձում մեխանիզմով ա/մեք.	մ <sup>3</sup>	5.50	710.00	3905.00	
8	Շին. աղբի տեղափոխում 12կմ հեռ. վրա	տ	10.00	2664.00	26640.00	
9	Պլաստմասե կախովի առաստաղների քանդում	մ <sup>2</sup>	26.50	710.00	18815.00	
	<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>				233134.00	1.13%
	Երկրորդ հարկ					
	Դահլիճ					

Բացվածքներ						
1	Փայտե պատուհանների քանդում /աստիճանավանդակ/	մ <sup>2</sup>	22.81	1687.00	38483.84	
2	Փայտե դռների քանդում	մ <sup>2</sup>	7.29	1154.00	8411.51	
<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>					46895.35	0.23%
<b>Հատակներ</b>						
1	Դահլիճի Մանրահատակի քանդում	մ <sup>2</sup>	118.00	488.00	57584.00	
2	Դահլիճի Յ/ավազե հարթաշերտի քանդում 30մմ հաստ.	մ <sup>2</sup>	118.0	355.00	41890.00	
<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>					99474.00	0.48%
<b>Պատեր</b>						
1	Պատերից և առաստաղներից հին ներքի մաքրում/կացնահատում/	մ <sup>2</sup>	625.0	310.00	193750.00	
2	Գաջի սվաղի վնասված հատվածների քանդում պատերից	մ <sup>2</sup>	200.0	621.00	124200.00	
3	Նույնը առաստաղից	մ <sup>2</sup>	155.0	710.00	110050.00	
4	Դահլիճի պատուհանների վերնամասից գիպսե քիվերի քանդում	հատ	3.00	888.00	2664.00	
5	Դահլիճի դռան վերևի 2,3 մ երկարությամբ, խարսխված գիպսե քիվի քանդում	հատ	1.00	5772.00	5772.00	
6	Շին. աղբի բարձում մեխանիզմով ա/մեք.	մ <sup>3</sup>	9.15	710.00	6496.50	
7	Շին. աղբի տեղափոխում 12կմ հեռ. վրա	տ	14.00	2664.00	37296.00	
8	Նորոգվող հատվածներից գույքի տեղափոխում	հատ	1.00	53280.00	53280.00	
<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>					533508.50	2.58%
<b>Երրորդ հարկ</b>						
<b>Միջանցքներ, աստիճանավանդակ և լսարան 304</b>						
<b>Հատակներ</b>						
1	Ամֆիթատրոն տանող փոքր միջանցքի մանրահատակի քանդում	մ <sup>2</sup>	17.00	488.00	8296.00	
2	Նույնի ց/ավազե հարթաշերտի քանդում 30մմ հաստ.	մ <sup>2</sup>	17.0	355.00	6035.00	
<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>					14331.00	0.069%
<b>Պատեր</b>						
1	Պատերից և առաստաղներից հին ներքի մաքրում	մ <sup>2</sup>	600.0	310.00	186000.00	
2	Գաջի սվաղի վնասված հատվածների քանդում պատերից	մ <sup>2</sup>	300.0	621.00	186300.00	
3	Նույնը առաստաղից	մ <sup>2</sup>	125.0	710.00	88750.00	
<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>					461050.00	2.23%
<b>Ամֆիթատրոն</b>						
<b>Հատակներ</b>						
1	Փայտե կոնստրուկցիաների քանդում	մ <sup>2</sup>	3.20	12432.00	39782.40	
2	Փայտե երեսապատման տախտակների քանդում հատակներից	մ <sup>2</sup>	35.0	488.00	17080.00	
3	Փայտե երեսապատման տախտակների քանդում ճակտոններից	մ <sup>2</sup>	25.0	488.00	12200.00	
4	Շին. աղբի բարձում մեխանիզմով ա/մեք.	մ <sup>3</sup>	8.70	710.00	6177.00	
5	Շին. աղբի տեղափոխում 12կմ հեռ. վրա	տ	13.00	2664.00	34632.00	
<i>Ընդամենը տվյալ բաժնով</i>					109871.40	0.53%
<b>Հիմնանորոգման աշխատանքներ</b>						
<b>Առաջին հարկ</b>						
<b>Միջնորմներ</b>						

1	Միջնորմների շարվածքի իրականացում պենզաբլոկներով 100մմ	մ <sup>3</sup>	2.9	143248.70	415421.23	
2	Անցքերի շաղափում Φ12մմ	հատ	30.00	444.00	13320.00	
3	Շարվածքի ամրանավորում	տ	0.0280	88800.00	2488.18	
4	Ամրան Φ10A500c	տ	0.0096	399600.00	3844.15	
5	Ամրան Φ8Ac-1	տ	0.0184	444000.00	8169.60	
<b>Ընդամենը տվյալ բաժնով</b>					<b>443243.16</b>	<b>2.15%</b>
<b>Բարավորներ</b>						
1	Ե/բետոնե բարավորի իրականացում B15 բետոնով	մ <sup>3</sup>	0.085	66600.00	5647.68	
2	Ամրան Φ8 Ac	տ	0.006	444000.00	2646.24	
3	Ամրան Φ12 A500c	տ	0.014	399600.00	5738.26	
<b>Ընդամենը տվյալ բաժնով</b>					<b>14032.18</b>	<b>0.068%</b>
<b>Բացվածքներ</b>						
1	Արտաքին երկփեղկանի մետաղական դուռ տեղադրումով: /մետաղական խողովակներից շրջանակ, մետաղական թիթեղից միջուկ 1. 2մմ, ներսի կողմից լամինացված/	մ <sup>2</sup>	4.32	88800.00	383616.00	
2	Այուրմինե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), բացվող	մ <sup>2</sup>	11.01	57720.00	635497.20	
3	Այուրմինե, բլոկով, սպիտակ 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր), չբացվող	մ <sup>2</sup>	19.02	44400.00	844488.00	
4	Բարդ փական	հատ	10.00	8880.00	88800.00	
5	Պատուհանի ցանց	հատ	10.00	7104.00	71040.00	
6	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում	մ <sup>2</sup> բացվածք	30.03	532.00	15975.96	
7	Պատուհանագոգեր 400մմ հաստ. /սպիտակ/	զծմ	14.40	4440.00	63936.00	
8	Այուրմինե բլոկով, ջերմակամուրջով, կաղնեգույն 70մմ հաստ. ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում բացվող մաս /արտերկիր/	մ <sup>2</sup>	15.77	71040.00	1120300.80	
9	Այուրմինե բլոկով, ջերմակամուրջով, կաղնեգույն 70մմ հաստ. ապակեփաթեթով 4+4 պատուհանների տեղադրում չբացվող մաս /եվրոպական/	մ <sup>2</sup>	7.04	62160.00	437606.40	
10	Բարդ փական	հատ	12.00	8880.00	106560.00	
11	Պատուհանի ցանց	հատ	12.00	7104.00	85248.00	
12	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում	մ <sup>2</sup> բացվածք	22.81	532.00	12134.92	
13	Պատուհանագոգեր 400մմ հաստ. /կաղնեգույն/	զծմ	11.20	5328.00	59673.60	
14	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., դռների մոնտաժում ապակեփաթեթով 4+4մմ, հայկական պրոֆիլ	մ <sup>2</sup>	9.65	39072.00	376966.66	
<b>Ընդամենը տվյալ բաժնով</b>					<b>4301843.54</b>	<b>20.83%</b>
<b>Ներքին հարդարման աշխատանքներ</b>						
<b>Սանհանգույցներ</b>						
<b>Հատակներ</b>						
1	Ց/ավազե հարթաշերտի իրականացում սանհանգույցներում 30-50մմ հաստ.	մ <sup>2</sup>	24.50	1953.00	47848.50	

2	Հատակների ջրամեկուսացում սանհանգույցներում: մեկ շերտ իզոգամով Յմն ГООТ 2678-94	մ <sup>2</sup>	24.5	1598.00	39151.00	
3	Կերամիկական սալիկներով հատակների իրականացում սանհանգույցներում/Իսպանիա կամ համարժեք/	մ <sup>2</sup>	24.50	7548.00	184926.00	
4	Սալերով շրիշակների իրականացում h=100մմ	զծմ	56.0	799.00	44744.00	
5	Բետոնե հարթակների վերականգնում B15բետոնով	մ <sup>3</sup>	1.00	33744.00	33744.00	
<b>Ընդամենը տվյալ բաժնով</b>						
<b>Պատեր</b>						
1	Պատերի ց/ավազե սվաղի իրականացում	մ <sup>2</sup>	195.00	1776.00	346320.00	
2	Պատերի երեսպատում հախճասալով/իսպանիա կամ համարժեք/	մ <sup>2</sup>	195.00	8436.00	1645020.00	
3	Սանհանգույցի առաստաղի ց/ավազե սվաղի իրականացում ցանցի վրա d=1,8մմ, բջիջը 50*50 /ռաբիցա	մ <sup>2</sup>	24.50	5328.00	130536.00	
4	Պլաստմասե կախովի առաստաղի իրականացում հիմնակմախքի պատրաստումով/սպիտակ/	մ <sup>2</sup>	26.00	5772.00	150072.00	
<b>Ընդամենը տվյալ բաժնով</b>						
<b>Լսարաններ</b>						
<b>Պատեր</b>						
1	Մարտկոցների ապամոնտաժում /80 սեկցիա/ և վերատեղադրում	էկմ	28.56	888.00	25361.28	
2	Պատերի լավորակ գաջի սվաղի իրականացում	մ <sup>2</sup>	140.0	2042.00	285880.00	
3	Շեպերի գաջի սվաղ բարձրորակ	մ <sup>2</sup>	25.0	3108.00	77700.00	
4	Պատերի և շեպերի լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով ձեփամածկումով	մ <sup>2</sup>	275.00	799.00	219725.00	
5	Առաստաղների լավորակ գաջի սվաղի իրականացում	մ <sup>2</sup>	55.0	2220.00	122100.00	
6	Առաստաղների լավորակ ներկում ջրադիսպերսիոն ներկով ձեփամածկումով	մ <sup>2</sup>	108.00	888.00	95904.00	
<b>Ընդամենը տվյալ բաժնով</b>						
<b>Երկրորդ հարկ/Դահլիճ/</b>						
<b>Բացվածքներ</b>						
1	Դահլիճի մուտքային 1,36x2,68մ դեկորատիվ փայտե դռների վերատեղադրում դեպի միջանցքի կողմ	հատ	2.00	7104.00	14208.00	
2	Դահլիճի մուտքերի նոր փայտե, ձայնամեկուսիչ դռների տեղադրում	մ <sup>2</sup>	7.29	69264.00	504906.85	
<b>Ընդամենը տվյալ բաժնով</b>						
<b>Հատակներ</b>						
1	Ց/ավազե հարթաշերտի իրականացում դահլիճում 30-50մմ հաստ.	մ <sup>2</sup>	118.0	1598.00	188564.00	
2	Նրբատախտակի իրականացում դահլիճի մանրահատակի տակ 9մմ հաստ.	մ <sup>2</sup>	118.0	3996.00	471528.00	
